

**«Պետական աջակցություն գյուղատնտեսական
հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային
վառելիքի ձեռքբերման համար» ծրագրի
շրջանակներում սուբսիդիա տրամադրելու մասին
որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2017 ԹՎԱԿԱՆԻ N ____Ա

«ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ
ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով
Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2017 թվականի
գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային
վառելիքի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի
իրականացման համար անհրաժեշտ 171,500,000 դրամը սուբսիդիա
տրամադրելու մասին պայմանագրով, Հայաստանի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի ապրիլի 12-ի «Պետական
աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով
դիզելային վառելիքի ձեռքբերման համար» N 102-Ա հրամանով հաստատված
ծրագրին համապատասխան տրամադրել «Մաքսիմ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերությանը՝ մինչև 5,000,000 լիտր դիզելային
վառելիքի մատակարարումները (1 լիտրը 314.3 դրամ արժեքով, որից
սուբսիդավորման ենթակա գումարը 1 լիտրի համար 34.3 դրամ)
կազմակերպելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ ապահովել ծրագրով
նախատեսված գործառույթների իրականացումը:

